

ՍԱՀ ՓՐՈՓ. ԼԵՒՈՆ ԿԻՐԵՂԵԱՆԻ



ՍԱՀ ՓՐՈՓ. ԼԵՒՈՆ ԿԻՐԵՂԵԱՆԻ հոս մահը Փրոֆ. Լևոն Կիրեղեանի, որ տեղի ունեցած է Ազոլոյի իր ձեռակերտ ամառանոցին մէջ, տարւոյս Սեպտեմբեր 2-ին: Փրոֆ. Լևոն Կիրեղեան թուականէս շուրջ երկու տարի առաջ կաթուածի առաջին հարուածը առած էր, սակայն շնորհիւ իր ուժեղ կազմին, և իր կնոջ՝ Մարիամիկին, իր զաւկին՝ ճրտ. Յովհաննէսի և մանաւանդ իր նուրի՝ Տիկ. Տինայի գուրգուրոտ խնամքներուն՝ յաջողած էր դիմադրել: Սեպտեմբեր 2-ին կը հնչէր վերջին ժամը, ու ան կը խուսէր իր սիրելիներու ձեռքէն՝ մտնելով յաւիտենութեան դռներէն ներս:

Փրոֆ. Լ. Կիրեղեան բազմակողմանի ձիրքերով օժտուած անձնաւորութիւն մը, եղբորորդին Ռ. խաթա Կիրեղեան Գերպ.

Աբրահօր, ծնած էր Տրապիզոն, և աշակերտած Մուրատ-Ռափայէլեան վարժարանը 1883-ին և 1888-ին կ'աւարտէր յաջողութեամբ իր ընթացքը: Լևոն Կիրեղեան թէեւ սիրող մը ազգային դպրութեան, ստիպուած էր ընտրել գործնական ճիւղ մը, ու այսպէս կը մտնէր Հոռոմի Արքայական Բարձրագոյն վարժարանը ճարտարապետութեան, զոր փայլուն նիշերով կ'աւարտէր 1896-ին, և յետոյ կը լրացնէր նաեւ հոն Ուսուցչապետութեան ընթացքը նոյն ճիւղին, արժանանալով այսպէս կրկին վկայականներու: Իր ճարտարապետական գործունէութեան գլխաւոր ասպարէզները կ'ըլլան Պոլիս և Վառնա, ուր թողած է հոյակապ պալատներ, պետական թատրոններ և տուններ: Առաջին միջազգային պատերազմէն առաջ հաստատուած էր վերջնականապէս Խաւրիս և մանաւանդ Ազոլոյի գեղանիստ բարձունքին վրայ, զոր կը սիրէր, և ուր կը շինէր Արարատ ամարանոցը, առանձնաշաւու համար կարծես աշխարհի ժխորէն, լաւագոյն կերպով նուիրուելու համար իր խոկուններուն և գրական ուսումնասիրութիւններուն:

Իր մէջ կար ստուգիւ բացի բաջ ճարտարապետէն՝ նաեւ ուսումնասէր մը ազգային լեզուի ու պատմութեան և ընդհանուր գրականութեան: Իմ տաղերս հատորին մէջ ունի ամփոփուած իր երիտասարդական օրերուն ոտանաւորները, աւելի ուշ գրած է Քերրոյ աւուրի մը խորհրատմակը (Պոլիս, 1912), Վիրգիլեան երկնագրաւոր (Վենետիկ - Ս. Ղազար, 1931), Կարս և Արտանան (Վենետիկ - Ս. Ղազար, 1949), զորք իր ծերութեան տարիներուն: Բացի ասոնցմէ թողած է բազմաթիւ կիսաւարտ ու նաեւ լրացած աշխատութիւններ, ինչպէս Խաւրիոյ մէջ գտնուած Բիւզանդական Տաճարներու յատագծերու ուսումնասիրութիւն մը, որոնց բազմաթիւ նախանիւթեր հաւաքած էր իր ճամբորդութիւններու ընթացքին, Հայ Եպիսկոպոս-

ներու Տապանաքարերը՝ զոր գտած է Հոռոմ և Խաւրիոյ ուրիշ քաղաքներու մէջ:

Կը սիրէր հետեւիլ քաղաքական անցուղարձեւում: Երկրորդ միջազգային պատերազմին, հիմնուած, ձայնասփիւռի հաղորդած տեղեկութեանց վրայ, զրի առած է քաղաքական, ընկերային հարցերու շուրջ իր տեսութիւնները, որոնք բնական է կը մնան անտիպ: Մինչդեռ առաջին միջազգային պատերազմին՝ երբ տակաւին երիտասարդ էր, կենդանի ու աշխոյժ Ֆրանսերէնով մը գրած է «Le Responsable» (Paris, 1919) մենագրութիւնը, ուր առաւելուր ձեռով կը վերլուծէ մարդկութեան հոգեբանութիւնը, և կը ձողի պատերազմին պատճառ հանդիսացող և նոյն պատերազմին զոհերը եղող ազգերու փոխադարձ յարաբերութիւնները, գրուած շատ սրամիտ կերպով:

Միթարեան Միաբանութիւնը յայտնելով իր խորին ցաւակցութիւնները կնոջ՝ Տիկին Մարիամիկին, զաւկին՝ ճարտարագէտ Պր. Յովհաննէսին և նուրի՝ Տիկին Տինային, կը հայցէ Աստուծոյ հոգեկան սփոփում իրենց ծանր ցաւին, և միանգամայն երկնային օրհնութիւն բովանդակ ընտանիքին և անմեղուկ թոռներուն վրայ:

ԽՄԲ.

ԱԿԵՏԱՐԱՆԻ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԶԵՌԱԳԻՆԵՐ

ՏԻՍԱՐ ՊՕՂՈՍ ԻՍՊԷՆԵԱՆ Դեկտ. 1ին այցելելով Ս. Ղազար, և հոն թաղուած իր սիրելիներու դամբանին վրայ աղօթելէ վերջ, Միաբանութեան թանգարանին իր անունով կոչուած բաժինը ճոխացնելով՝ նուիրեց երկու ձեռագիր մանրանկար Աւետարաններ, և արուեստական գեղեցիկ դանակ մը ճոխ ու զարդարուն պատեանով, հաւանօրէն 17րդ դարու ձեռագործ:

Դանակին մէջ կողմը գրուած է «Աստուծոյ ծառայ Աբրահամ Խուլիճան, և միջանկեալ ոսկէփետուր երկու աղանձներ որ արծաթեայ բաժակէ մը կ'ըմպեն. իսկ միւս կողմը՝ երկու

զագաններ խոյ մը կը հետապնդեն. երկու կողմերն ալ պճնուած են ծաղիկներով ու տերեւներով: Նոյնպէս երախակալին մէկ երեսը քանդակուած է տերեւազարդերով ու ծաղիկներով, մինչ միւս երեսը՝ վերը, մէկը թմբուկով կը խաղցնէ արջ մը՝ շուրջը թոժիւններով. իսկ վարը՝ Ս. Գէորգ հեծեալ՝ կը մխէ նիզակը վիշապին բերանը. աւելի ստորեւ՝ նուագածու մը ծնրադիր և առջեւ մատուռակ մը բաժակ ձեռքը. երկու ծայրերն ալ կը վերջանան զանազան կենդանիներու կերպարաններով: Թէ՛ դանակին վրայ և թէ՛ երախակալին ծայրը կան մէկ մէկ կարմրեղանգ փոքր քարեր:

Աւետարաններէն առաջինը թիւ 1987, ունի թուրք 277. - Մեծութիւն 15 X 11.5. - Գրուած էրկուսիւն, իւրաքանչիւրը 9.5 X 3. - Տողք 23. - Թերթը 22, իւրաքանչիւրը 12 թուղթ, Ա-ԻԲ. (միայն Ա. ունի 22 թուղթ). - Նիւթ՝ մագաղաթ բարակ փայլուն - Կազմ փայտեայ կաշեպատ ուղղանկէն գիծերով զարդարուած. - Մագաղաթեայ պահպանակ առջեւ և ետեւ լատիներէն աւետարանի մէկ մէկ թուղթ գոթական գրով, առաջինը կազմին պատճառաւ ծական գրով, առաջինը կազմին պատճառաւ ծական կազմին անշատուած. իսկ վերջինը կոտած և կազմին անշատուած. - Հանգամանք լաւ, միայն երկու առաջին թուղթերը և 24-41 թուղթերուն վերի եզրերը միջերէ կրծուած են. - Գիրքը թերթի կանոնաւոր. - Զարդագիրք բազմաթուղթի կանոնաւոր. - Նիւթն էջի գլուխի սկզբնաւորութեան և ստեյլ, և ամէն էջի վրայ շատ մը համարներ ոսկեպատով կը սկսին. - Խորագիրք աւետարաններու սկիզբը զարդագրերով, զլխագրերով, լուսանցքի ներքեւ ընդհանրապէս ամէն էջ նշանակուած են աւետարաններու համաբարբառ տեղերու տախտակները. - Խորանք կարմիր, կապոյտ, կանաչ և ոսկեգոյն, յաջող ըստ բաւականի. երկու առաջիններու մէջտեղը վերով բոլորակի մէջ նկար (Եւսեբ և Կարպ.) երկուստեք ծառերով. իսկ յետոյ համեմատական աղիւսակներ՝ նկարէն խորաններով, սիւններով և լուսանցազարդերով, թռչուններ, զոյգ աքլորներ, առիւծներ, հուսկ թագակիր երկու կապիկներ. - Լռանցազարդք բազմաթիւ, երբեմն աւետարանի գրուածներուն համաձայն պատկերներով անձերու, զիւհաբաններու եւն. - Նկարք բազմաթուղթ և յաջող. թղթ 14ր Մատթէոս նստած և հրեշտակը ոտքի վրայ ներկայացնելով աւետարանը, երկու աշ-

տարակներով տաճարի մը առջեւ: Թղթ. 86ր Մարկոս նոյնպէս բազմած, առնթեր առիւծ մը թաթերուն մէջ աւետարանը, գմբեթագարդ և կրկին աշտարակներով շէնքի մը առջեւ: Թղթ. 135ր Ղուկաս նստած թեւաւոր ցուլի մը քով, որ աւետարանը կը սեղմէ գեղեցկաշէն սինագարդ տաճարի մը ստորոտը. Թղթ. 218ր Յովհաննէս ալէգարդ ծերունի աւետարանիչ՝ աջով կը գրկէ աւետարանը և ձախով կը մատնանշէ իւր քով նստած երիտասարդ Պրոխորոնի: Գառարկի Թղթ. 276-7. - Ժամանակ ՌձԻ=1671. - Գրիչ և Ծաղկոյ Մարկոս վարպետ. - Տեղի կոստանդինուպոլիս, ի խնդրոյ վանեցի խօջայ Պողոսին. - Յիշատակագրութիւնը Թղթ. 275ա-բ. «Փառք ամենասուրբ Երրորդութեանն հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ աստուծոյ»: Արդ գրեցաւ և ծաղկեցաւ սուրբ աւետարանս ի քաղաքն կոստանդինուպոլիս, ձեռամբ մեղապարտ մարկոս վարպետի, ի հայրապետութեան սուրբ Էջմիածնայ տեան յակոբ կաթողիկոսի, ի փաթիշահութեան սուլթան մահմադին. ի խնդրոյ վանեցի խօջայ պողոսին. քանզի արար լաւ բարութիւն և ստացաւ զսուրբ աւետարանս ԲՃ զոչի ի հալալ և արդար վստասկոյ իւրոց և ետ ածաթել և եղ ի զուռն սուրբ վարդան զօրավարին յիշատակ բացի հոգւոյ իւրոյ և ծնողացն հօրն զրիգորին մօրն աղասուն, և իւր եղբարցն սահակուն պետրոսին սաֆարին աստուածատուրին, հօրեղբարցն սարգսին մինասին էնիթին. կողակցոյն խաթունաղին, որդւոյն սաֆարին, մեծ պապուն դամոնին և մեծ մամուն ջան սուլթանին. քերցն հոփսիմին էլին ուսթիանին և իւր կողակցին մարգարտին. որք հանդիպիք սմա, կարդալով և կամ տեսնելով, յիշեցէք և աստուած ողորմի ասացէք խօջայ պողոսին և իւր օրհնեալ եղբարցն և ծնողացն և ազգականացն և աստուած զձեզ յիշէ յաւուրն դատաստանին ամէն: Եւ արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի թվականութեանս հայոց ո. ճ. և ի. ամին ի խնդրոյ վանեցի խօջայ պողոսին»:

Երկրորդ Աւետարանը՝ Թիւ 1988, ունի Թոշոք 310. - Մեծութիւն 15.5 X 11. - Գրոշրիւն երկսին, իւրաքանչիւրը 10 X 3. - Տողք 23. - Թերթք 23, իւրաքանչիւրը 12 թուղթ, սկիզբը 29 թուղթ և ի վերջոյ (306-310) թերթաթիւ չունին. - Նիւթ մագաղաթ սպիտակ փայլուն. - Կազմ փայտեայ կաշեպատ, զարդարուն, կեղրոնը գծաւոր խաչով, մերկացած հաւանօրէն

արծաթեայ գամերէն կամ զարդերէն, որոնց հետքերը կամ ծակերը մնացած են կաշիին վրայ. - Մագաղաթեայ պահպանակի տեղ կը ծառայեն սկիզբը և վերջը դատարկ երեք մագաղաթ թերթեր, - Հանգամանք շատ լաւ պահուած: Գիրք ողորգիր կանոնաւոր և մաքուր. - Զարդագիրք բազմաթիւ, ամէն գլուխներու սկիզբը երկգոյն թուշնագիր. չքեղ են Աւետարաններու սկիզբը եղող մեծ զարդագիրները, որոնց առաջին գիրը աւետարանչին կենդանակերպէն աւանուած է. - Խորագիրք և սկզբնատառք ամէն համարի՝ ոսկետառ, ինչպէս որ ամէն գլխու առաջին տողը՝ ոսկի, և երկրորդը՝ կարմրագոյն. իսկ աւետարաններու սկիզբը առաջին տողը՝ զարդագիր, միւսները կարմիր և մանուշակ գլխագիր: Լուսանցքի վրայ գլուխներու բաժանումները սեւ և մաս մ'ալ ոսկետառ շրջանակի մէջ աւանուած. լուսանցքի ներքեւ համաբարբառ տեղերու տախտակները՝ սեւագոյն. - Խորանք երկու գոյնով կարմիր և մանուշակ, շատ յաջող. - Կխախտը լուսնի համեմատական աղիւսակներով, սիններով և լուսանցագրերով, ի մասնաւորի սիրամարգեր, վիշապներ, կապիկներ և պէսպէս թուշնագրեր, վիշապներ, կապիկներ և պէսպէս թուշնագրեր, ճաշակով տեղաւորուած են. - Նիւթը բազմագոյն ու տասնըվեց են, բացի չորս աւետարանիչներու պատկերներէն. այսինքն՝ 1. Աւետումն. Ս. Կուսին: 2. Երկրպագութիւն մոգերու: 3. Յիսուս մանուկ՝ Ծերունի Սիմէոնի գիրկը: 4. Մկրտութիւն: 5. Յիսուս ի Թափոր՝ Մովսէսի և Եղիայի հետ երեք աշակերտներով: 6. Ս. Ղազարու յարութիւն: 7. Մուտք Քրիստոսի յերուսաղէմ: 8. Վերջին ընթրիք: 9. Ռաշուայ առաքեալներու: 10. Համբոյր Յուդայի: 11. Յիսուս խաչաբարձ դէպի Գողգոթայ: 12. Խաչելութիւն Յիսուսի: 13. Յարութիւն Յիսուսի: 14. Համբարձումն: 15. Գալուստ Հոգւոյն: 16. Վերջին դատաստան: - Ժամանակ անյայտ, չունենալով յիշատակարան. Գրիչ և Ծաղկոյ ու Տեղի և Տէր անյայտ*:

Հ. ՔԵՐՈՎԵՒՆՆ Վ. ԶՐԱՔԵԱՆ

* Տե՛ր Իսպէնեան ասկէ առաջ ալ, 1948ին, բերած ու նուիրած է մանրանկարներով ճոխ ուրիշ Աւետարան մ'ալ Թ. 1977, գրուած 1704ին Եգեկիէէ զպրէ ի գիւղաքաղաքի Պաղճա Սարայ: Միաբանութիւնն Բագմալիյի միջոցով իր ջերմ շնորհակալութիւնը կը յայտնէ իրեն, որ հին ձեռագիրները մի առ մի ազատելով կը բերէ ապահովել Մատենադարանիս մէջ:

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒ ՓԱՐՏԵՐ ՄԻԹԱՐ ԱՐԲԱՀՕՐ ՄԱՀՈՒՍՆ Բ. ԴԱՐԱՄԱՐԶԻՆ ԱՌԻԹՈՎ

IL SEGRETARIO GENERALE
DELLA PRESIDENZA DELLA REPUBBLICA

Roma, 9 Agosto 1950.

Reverendissimo Padre Abate,

Il Presidente della Repubblica ha preso visione della Sua lettera del 3 agosto recante la notizia della solenne commemorazione indetta dalla Congregazione dei Padri Armeni Mechitaristi di Venezia nella ricorrenza del bicentenario dell'Abate Fondatore.

Il Presidente, nel rendere vive grazie per la cortese comunicazione, tiene a far giungere a Vostra Paternità Reverendissima ed a tutti i Reverendi Padri Mechitaristi il suo memore saluto.

Il Presidente desidera altresì esprimere ogni migliore augurio per il felice proseguimento della missione religiosa e civile cui la Congregazione intende nel solco della sua benemerita tradizione e nello spirito di amicizia con il nostro Paese.

Mi valgo con piacere della circostanza per pregarLa di accogliere, Reverendissimo Padre Abate, anche gli atti del mio deferente ossequio

Dev.mo

FERDINANDO CARBONE

Rev.mo Padre SERAPIONE ULUHOGIAN
Abate Generale dei Padri Armeni Mechitaristi
Isola di S. Lazzaro degli Armeni
Venezia

Bologna, 10 Agosto 1950.

Rev.mo Abbate
dei Mechitaristi di S. Lazzaro - Venezia

La ringrazio vivamente della segnalazione del loro triduo Centenario con la partecipazione dell'Em.mo Confratello Agagianian.

Ben volentieri farei anch'io una desiderata e doverosa visita di restituzione, ma non potrei che l'8 od il 9, impegnato come sono il 10 in Diocesi.

Qualora andassero bene detti giorni voglia segnalarmi quale contributo potrei dare io allo svolgimento delle S. Cerimonie.

Io poi attendo l'assistenza Sua e di codesta Sua Religiosa comunità alle Solennità Centenarie di S. Petronio e precisamente per lo svolgimento del Pontificale dell'Em.mo Agagianian, 1° ottobre p. v., in S. Petronio, come già Le avranno segnalato da Roma, avendone pregato, per praticità di fatto, l'Ecc.mo Kedigian.

Don Giuseppe Kaftangian mi ha segnalato già il gruppo da Roma di 12 persone circa. Ella dovrebbe dirmi del gruppo da Venezia, desiderando averli tutti meco alla Villa Seminario, meno inadatta per la circostanza, che nel 1948.

In attesa di Suo riscontro, ringrazio e benedico di cuore.

Aff.mo in C. J.

G. B. Card. Arcivescovo

NASALLI ROCCA